ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 47

23 մայիսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ՔԱՂԱՔ՝ ՄԱՐԱԼԻԿ) ՀՈՂԵՐԻՑ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-003-0013-0016) ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ մասերի, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության քաղաք Մարալիկ Հրանտ Շահինյան փողոց 302/8 հասցեում գտնվող հողամասում սպասարկման սրահ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 08-003-0013-0016) 0.01008 հեկտար հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 100 %-ի չափով՝ 79834 (յոթանասունինը հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ -12 Դեմ՝-0 Ձեռնպահ՝-0

Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Ա. ԱՐՄԵՆՅԱՆ

Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ

Գ.ՂԶՐՈՅԱՆ

Բ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

Ա. ՆԻԿՈՅԱՆ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թվականի մայիսի 23
Քաղաք Մարալիկ